ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"13" հոկտեմբերի 2011թ. № 109 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՆՈՒՇԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ 728 հրամանագրի 1.6 կետով և 1.16 կետի ա) ենթակետով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 10-ի <<Գեղանուշի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և ընտրված տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N 148-Ա որոշման, **կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1.<<Գեղանուշի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Տիգրան Պետրոսյանի ընտրության (նշանակման) կապակցությամբ կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Ժասմեն Աբգարյանին 2011թ. հոկտեմբերի **13**-ից ազատել տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից:

2.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով

Կոզմանով Կառլեն	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Գրիգորյան Արսեն	Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
Հարությունյան Գայյա	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ
Պետրոսյան Տիգրան	«Գեղանուշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրեն (ընդունող)
Աբգարյան Ժասմեն	«Գեղանուշի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (հանձնող)

3. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

4.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2011թ. հոկտեմբերի 13
ք. Կապան